ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 10 -ի թիվ 312 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՕՇԱԿԱՆԻ Փ. ԲԱԲԿԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԱՐԳԻՍ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Հովնանյանի 2026 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սարգիս Հովնանյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 17-ը ներառյալ:
2. Սարգիս Հովնանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դասվար Մերի Զոհրաբյանին:
3. Սարգիս Հովնանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 18-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/13/2026 15:39:15 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ